№ 3

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

աշխատասիրեց

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՆ

80

VI
Գ - 250

ՊԱՍԱՔՈՒՆ Գ. 18 ½ կոպ.

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

Աշխատասիրեց

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՆ

№ III

ԹԻՖԼԻԶ

Ի Տպարանի Ց. Մարտիրոսեանց։

1880

Արտիս խորքէն բղխած

Ջերմեռանդ Նուէր

ՕՐ. ԳԱՅԻԱՆԷ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻՆ

1

ՆՈՐ ՏԱՐԻ

Ահա հասաւ նոր տարի,
Հետը բերեց նոր բարի —
Մանրը տրղոց՝ ուրախ օր,
Բարի զաւակ՝ հօրն ու մօր։

* * *

Մանրը տրղայք են ուրախ,
Ունին կաղին, կօղինախ,
Սալորի չոր, չամիչ, թուզ,
Փըշատ, ունաբ ու ընկուզ։

* * *

Մանրը տրղայք՝ չի մոռնաք,
Աշխարքումըս չէք մենակ,
Ուրիշ շատ խեղճ տրղայք կան
Աղքատ և ան օգնական։

* * *

Աղքա հայր ու մայր չունեն,
Սև չոր հացի կարօտ են.
«Աղքատներին ողորմած
Եղէ՛ք», կասէ ձեզ Աստուած։

2

Զ Մ Ե Ռ

Զրգիտեմ՝ ինչո՞ւ ձրմեռուայ օրը
Ցիշում եմ ես միշտ իմ հայ-եղբօրը, —
Ասում եմ՝ արդեօք չունի՞ նա կարիք,
Հաց, միս, եղ ու փայտ ունի՞ նա հերիք,
Ունի՞ տաք հալաւ, ունի՞ նա մուշտակ,
Ամո՞ւր է տունը, կըտուրը չէ՞ ծակ . . .
Ու այսպէս ես միշտ ձրմեռուայ օրը
Միտքս բերում եմ իմ հայ-եղբօրը։

3

ԳԱՐՈՒՆ

Կարօտ ենք տեսքիդ, աննըմա՛ն գարուն,
Շո՛ւտ արի մեզի, բե՛ր ծաղիկ սիրուն,
Բե՛ր պայծառ արև, բե՛ր մեզ տաք օրեր,
Ճըռուլըռող թըռչուն, բե՛ր կանանչ դաշտեր։

*
* *

Բա՛ց մեր դըռները, բա՛ց մեր պատուհան,
Թո՛ղ բացուին ծաղկին, վարդ, մեխակ, շուշան.
Փակուած սենեակէն ելնինք, ազատուինք,
Կանանչ դաշտ երթանք, խաղանք գըլորուինք։

4

ՄԵՂՈՒ

Հա՛, ծաղեցաւ արեգակը,
Հա՛, ծաղկեցաւ մանիշակը,
Մեղուն թողուց իր փեթակը
Տըզտըզալով-տըզտըզալով։

* * *

Մեղուն թըռաւ ծաղկէ ծաղկէ,
Մեղրը առաւ քաղցր-անուշիկ,
Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ
Պըզպըզալով-պըզպըզալով։

* * *

Անուշ մեղրը՝ մանրը տրղոց,
Դեղին մոմը՝ ամեն սրրբոց,
Իսկ չարերին՝ կրճ ու խայթոց.
Կրսկրծալով-կրսկրծալով։

5

Ա Ն Ձ Ր Ե Ի

Անձրև, անձրև՝ ցած արի,
Բրսցուր ցորեն ու գարի,
Բրսցուր ծաղիկ, կանանչ խոտ,
Աւլէ փոշի, մաքրէ՛ օդ։
Անձրև, անձրև՝ ցած արի,
Գալըդ ամենուս բարի։

6

ԾԻԾԵՌՆԻԿ

Տարին անցաւ, հասաւ Ապրիլ գեղեցիկ,
Հեռու աշխարքէ եկաւ Ծիծեռնիկ,
Բարի՞վ դուն եկար, գարնան կարապետ,
Բուն շինողներից ամենից վարպետ։

***

Կրունկը թրռաւ, գընաց վերերէն,
Սոխակն էլ փախաւ մեր պարտէզներէն,
Մէկ դու մընացիր ճընճղուկների հետ,
Սիրուն Ծիծեռնիկ, գարնան կարապետ։

***

Պատուհանիս մօտ շինէ քու բունը,
Անուշ ճրուողով երգէ գարունը,
Աճա՛ ձու, հանէ՛ դեղեցիկ ձագեր,
Մընա՛ մեր մօտը մինչի Սեպտեմբեր։

7

ՁԻՒՆ

Երբ որ ձիւն կուգայ՝ ես կուրախանամ,
Որ դուրս պիտ ելնեմ, դահուկ պիտ խաղամ. . .
Բայց տեղս որքան աղքատ տըղայք կան,
Որ տաք հալաւէ կարօտ կը մընան։

8

ՊՏՈՒՂՆԵՐ [1])

Լաւ պըտուղներ են —
Տանձ, կեռաս, սալոր,
Մոր, ելակ, հաղարջ,
Դեղձ, բալ ու խընձոր.

*
* *

Բայց երբ տեսնում եմ
Խաղող ու ծիրան,
Ինչքա՜ն յիշում եմ
Ես միշտ Հայաստան։

---

1) Խաղողը և ծիրանը (prunus Armenicus) Հայաստանի բնիկ պտուղներն են։

9

ԱՐՏՈՒՏ [1])

(Ազգային աւանդութիւն.)

Արտուտի՛կ՝ ինչո՞ւ թռչում ես վեր վեր,
Երկինքէն ասում ես տըխուր տաղեր,
Պարտէզ ու այգի ինչո՞ւ չես գընում,
Քընքոյշ ձագերդ որտեղ ես հանում։

***

Ա՜խ, շատ են, շատ են իմ կըսկիծն ու ցաւ.
Իմ մըտերիմը գընաց, հեռացաւ.
Հայ հողագործը — իմ սերտ բարեկամ,
Թըշնամու ահէն գընաց գաղթական։

***

Այն օրից հայոց դաշտք ամայացան,
Բերրի արտերը փշոով լցուեցան . . .
Տափի վրայ չունիմ ես հանգստութիւն,
Ու այդոր համար երկինք եմ թռչում,
Երկինք եմ թռչում ցերեկ, իրիկուն,
Երգով աղերսում եմ միշտ Աստծուն,
Որ մեզ ողորմի իր Աջով գթած,
Հայ հողագործին անէ գերեդարձ,
Հայաստան բերէ խեղճ հայ գեղջուկին. —
Այս է խորհուրդը իմ տխուր երգին։

---

1) Արտուտը (alanda, ղուտ) Հայաստանի ընկեկ թռչունն է, որ արտերու մէջ դնում է իւր բունը, և դէպի երկինք թռչելով, երգում է բոլոր զարուն և ամառ։

10

Ա Ք Լ Ա Ր

Ինչքա՜ն աքլարը կանգնած է բակում,
Պինդ պինդ կանչում է իր կուկուրիկուն։

*
* *

Ինքուր որ՝ վաղուց արևն է ծագել,
Բայց ծոյլ երեխան քընից չէ՛ զարթել,
Դեռ չէ՛ վերկացել, աղօթքը արել,
Դըպրոցի՞դասը դեռ չէ՛ սովորել։

*
* *

Կանչում է աքլարն իր կուկուրիկուն,
Տըղայոց պարտքը միտերն է ձըգում։

11

ԳԱՌՆՈՒԿ

Սիրուն, անմեղ իմ գառնուկ,
Բուրդքդ սպիտակ ու փափուկ,
Դաշտ վազելով ու արօտ,
Մօրքդ քաշում ես կարօտ.
Մի՛ լալ, գառնուկ սիրական,
Փոքրիկ տղին դու նման,
Կուգայ մայրքդ. հետը շատ
Կը բերէ քեզ անուշ կաթ։

12

ԱՄԵՆԱՄԵԾ ԱՆԲԱՂԴՈՒԹԻՒՆ

Երբ հողագործը չունի եզ, արօր,
Երբէք չեմ ասիլ նորան բաղդաւոր.

* * *

Երբ ապրանք ու փող չունի խանութպան,
Նա էլ է անբաղդ, թըշուառ բաւական.

* * *

Բայց երբ չերթայ հայ տըղան վարժատուն,—
Այս է ամենից մեծ անբաղդութիւն:

13

ԽԵԼՕՔ ԵՐԵԽԱՅ

Խելօք երեխան այսպէս պիտ լինի —
Կանուխ պիտ զարթէ, շուտ քուն պիտ մտնի.
Պիտի չի մաշէ սիրտը հօրն ու մօր,
Դըպրոց պիտ երթայ, կարդայ ամէն օր։

14

ՄՈՄ

Գըրպանումըս կայ քանի մի կօպէկ,
Ի՞նչ անեմ. բարի ինձ խրատ տուէ՛ք։

***

Գրնէ՛ տանձ, խրնձոր, ունաբ կամ փրշատ,—
Փող ունեցողին գրնելու բան շատ. . . . .

***

Զէ՛. ձեր տրուածը չէ՛ խրրատ բարի,
Այդ կրվայելէ մի շատակերի . . . .
Երբ իմ մայրիկը կը տանէ ինձ ժամ,
Գրրպանիս փողը մոմերի կուտամ,
Մոմերն կը վառեմ Սուրբերի դիմաց,
Զոհիս կը հաճի բարեգութ Աստուած,
Կուտայ ծնողներիս Նա առողջութիւն,
Ինձ էլ սէր ուսման ու յաջողութիւն . . . .

***

Ա՛ռեխերք՝ շատ շատ վառեցէ՛ք մոմեր,
Մոմով կը շինուին Հայի դրպրոցներ։

15

Ա Շ Ո Ի Ն

Աշունը եկաւ, թափեցաւ սաղարթ, [1])
Էլ մի՛ փընտրիլ դու մանուշակ ու վարդ,
Բնութիւնը տըխուր, պարտէզը տըրտում,
Զըմեռուայ հոգն է մարդոցը սրտում։

* * *

Երեխան փակուած մենակ սենեակում,
Պատուհանիցը պարտէզ է նայում,
Միտքը բերում է գարնան օրերը,
Մարգերի [2] վըրայ զըւարթ խաղերը . . .

* * *

Մի՛ տրտմիլ, տըղայ, թո՛ղ անցնի մարտը,
Նորից կը բացուին նարգիզն[3] ու վարդը,
Նորից սոխակը պիտի գայ հանդէս
Նորից խաղալու դու կերթաս պարտէզ։

---

1) Սաղարթ նշանակում է ծառի վրայի բոլոր տերևները։ Листва.

2) Մարգ նշանակում է դաշտի այն մասը, ուր բանում են ցորենախոտի (газонъ) հետ միասին սիրուն դաշտային ծաղիկներ։ Մարգը լինում է ըստ մեծի մասին այգիներում և պարտէզներում։ Мурава.

3) Նարգիզը գարնային ծաղիկ է, սաստիկ հոտոտ. բաղնում է սոդանից (луковица) և լինում է երկու տեսակ՝ դեղին և սպիտակ։ Нарцисъ.

16

ՎԱՐԺԱՏՈՒՆ

«Մայրիկ՝ ինչո՞ւ այս խեղճը
Ման է գալիս գըջըլտած,
Ոտքը բոբիկ, գըլխաբաց,
Ինքն էլ գրեթէ միշտ հարբած։»

* * *

—Որդեակ՝ դա էլ քեզ նըման
Մի օր տըղայ էր փոքրիկ.
Բայց թողուցին անխընամ
Նորան մոտի վատ մարդիկ.

* * *

Զուղարկեցին վարժատուն,
Բարի խրատ չի տրուին,
Մընաց խեղճը անուսում,
Ծոյլ ու անգործ բընաւին . . . .

* * *

Ինքըդ դատէ՛, բրբէտէն [1]
Օգուտ ունի՞ մեղուանոց.
Նոյնպէս գիտցի՛ր՝ տրգէտէն
Երբէք չիկայ շահ մարդոց։

* * *

Ա՛յն ժամանակ մեզ կուտան
Մարդիկ հալաւ, տուն ու հաց,
Երբ որ նոքա կըստանան
Մեզանից շահ՝ փոխադարձ . . . .

* * *

Այս պատճառաւ՝ այդ մարդը
Ման է գալիս գրչըլտած,
Ոտքը բոբիկ, գրլխաբաց,
Ինքն էլ գրեթէ միշտ հալբած։ —

*
* *

«Մ՚այրիկ՝ չուզեմ ես նրման
Լինել թըշուառ այդ մարդուն.
Այսուհետև պիտ երթամ
Ամենայն օր վարժատուն։»

---

1) Բրէտ, մեղուի նման մի տեսակ ճանճ է, որ մեղը չէ պատրաստում, բայց, ասում են, սիրում է մեղը գողանալ փեթակէն։ Զիերին սաստիկ խայթում է։ Оводъ.

17

ՀԶՕՐ ՃԱՐ

Երբ իմ ծընողքըս, կամ ես եմ տըկար,
Եւ կամ հանդիպի մի այլ պատահար,[1]
Երբ որ աշխարքի մէջ կայ ցաւ կամ սով
Երբոր մարդիկ են իրար հետ խըռով, —
Այս ամէն չարին ես ունիմ մէկ ճար,
Այդ՝ իմ աղօթքն է ամենի համար։

---

1) Պատահար, անբաղդ դէպքուած, խոխոքալու։

18

Զ Ա Տ Ի Կ [1])

Հողմը հընչեց 'ի հարաւէն,
Ազատութեան դաշտք ձիւներէն,
Բերկրութիւն է ամեն տըղոց,
«Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց։»

* * *

Առուները խոխոջացին,
Ծառերն բողբոջ արձակեցին,
Օդը լի է ձայնիւ թռչնոց,
«Քրիստոս յարեաւ 'ի մեռելոց։»

* * *

Տըղայ, աղջիկ — ուրախ, զըւարթ
Փթթեցան զերդ մայիսի վարդ . . .
Ոխ, քէն չունի սիրտը մարդոց,
«Քրիստոս յարեաւ ՝ի մեռելոց»։

*
* *

Քրիստոս յարեաւ . . . . կասկած չիկայ,
Բնութիւնն համայն է մեզ վըկայ . . . .
Բայց ե՞ըբ կասէ լեզուն հայոց —
«Նա էլ յարեաւ ՝ի մեռելոց։»

---

1) «Փորձից» արտատպած։

ԱՆԶՐԵՒ.



Անձ – րև, անձ – րև՝ ցած ա – րի,



Բլբս – ցուր ցո – ւրեն ու գա – ր,



1. Բլբս – ցուր ծա – ղիկ, կա – նգնիչ խոտ,

2. Անձ – րև, անձ – րև՝ ցած ա – ր



1. Ա – ղէ՛ փո – շի, մաք – ր է՛ օդ։

2. Գա – ղրդ ա – մե — նուռ բա – ր։

ՄԵՂՈՒ.



* *

Մեղուն թռաւ ծաղկէ ծաղիկ, Անուշ մեղրը մանրը տըրոց,
Մեղրը առաւ քաղցր-անուշիկ, Դեղին մոմը՝ ամեն սրրիոց,
Մոմը տարաւ հոտաւ-լուսիկ Իսկ չարերին՝ կրճ ու խայթոց
Պըզպըզալով — պզպըզալով: Կրսկրծալով - կրսկրծալով:

ՁԻՒՆ.



Երբ որ ձիւն կու-գայ՝ ես կու-րա-խա-նամ,



Որ դուրս պիտ ել-նեմ, դա-հուկ պիտ խա-



ղամ...Բայց տեղս որ-քան աղ-քատ տրրպա-ք



կան, Որ տաք հա-լա-վէ կա-րօտկրմինան:

ԳԱՐՈՒՆ.



* *

Բաց մեր դռռները, բաց մեր պատուհան,
Թող բացուին ծաղկին վարդ, մխակշուշան.
Փակուած սենեակէն ելնինք, ազատուինք,
Կանանչ դաշտ երթանք, խաղանք գլորուինք։

ՀԱՅԵՐԷՆ ԳՐՔԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՂՆԵՐԻՑ

Մի քանի պատճառներ արգելք եղան, որ «Թովմաս եղբօր տնակ» գիրքը մինչև այսօր չը-տպագրուեցաւ, չը նայելով որ թէ թարգմա-նութիւնը և թէ պատկերները վաղուց պատ-րաստ էին։ Եկող տարուայ Յունուարին անշուշտ կտպագրուի։

Այժմ մենք հրատարակում ենք մեր նշանա-ւոր բանաստեղծ Գամառ-Քաթիպայի մանկական երգերը, յուսալով մի կողմից, որ պատուելի բանաստեղծը չի դադարի հարստացնել մեր աղ-քատ մանկական գրականութիւնը նոր գրուածք-ներով, իսկ միւս կողմից՝ որ մեր լրագրու-թիւնը ուշադրութիւն կը դարձնի այս գրը-ուածքի վերայ և առանձնապէս չի լռի։

Շատ ցաւում ենք, որ մենք այս անգամ կարողացանք միայն չորս երգի նոտաներ տպագրել։ Եթէ մեզ չ՝օգնէին մեր հայ կանայք, այս էլ չէինք կարող տպագրել. ուրեմն շնորհակալութիւն ենք յայտնում նոցա և յուսով ենք, որ նոցա օգնութեամբ այս երգերի երկրորդ տիպը կը հրատարակենք աւելի քան չորս երգի նոտաներով։

Այս գրքի 500 օրինակը ձրի բաժանուելու է մի քանի հայ ուսումնարաններին։

«Կարմիր լապտեր» գրքոյկի հաշիւ.

Նկ. Կոլչենեն երկու պատկեր նկարելու . . .	20 — »
Պ. Շուանեն 3 պատկեր փորագրելու և տպելու	192 — »
Պ. Մարտիրոսեանցին տպելու	30 — »
Պ. Տէր-Սարգսեանցին. ընտիր թուղթ 9 տա. 4 ½-ը	115—80
Մշակներին մինչև տպարան	» —40
Կազմարարին կազմի և բրոշիւրի	86—25
Քարերի համար Շուանեն	20 — »
	464— 45 »

«Կենտրոնական գրավաճառանոցում» ծախւում են հետևեալ մեր հրատարակութիւնները.

Թաւամազ մեղու, Թարգ. օր. Տէր-Մարկոսեանի, պատկերազարդ և կազմած . . . . . » — 40

Կարմիր լապտեր, Թարգ. օր. Տէր-Մարկոսեանի պատկերազարդ և կազմած . . . . . » — 50

Նոյնը առանց կազմի . . . . . » — 30

Մանկական երգեր, աշ. Գամառ-Քաթիպան, նոտաներով և կազմած . . . . . » — 25

Նոյնը առանց կազմի . . . . . » — 15

Дозволено Цензурою 24 Декабря 1879 г.

Lit. W. Erfurt, Arcnd. A. Schwan